



Հունիս 1996

ՀԱՅԹ Հաստատությունը սույն տեղեկագրի միջոցով հրատարակում է իր գիտահետազոտական-ծրագրային աշխատանքների արդյունքներն ու իր տարբեր հանձնախմբերի ուսումնասիրությունների եւ տեսակետների քննարկման եզրակացությունները: Տեղեկագրում տեղ են գտնում նաեւ ՀԱՅԹ Հաստատության հետ գործակցող գիտահետազոտական հաստատությունների ու անհատ մասնագետների աշխատություններ:

ՀԱՅԹ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՇՈՒՄԸ, ՆՊԱՏԱԿԸ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԹ Հաստատության կոշումն ու նպատակը կայանում է հայ ազգային գոյատեւման եւ զարգացման համար ամենակենսական նշանակություն ունեցող գաղափարները, կարիքներն ու խնդիրները ըմբռնելու, վերլուծելու եւ դրա հիման վրա տարբեր բնագավառների ազգային ամենաբարենպաստ քաղաքականությունները առաջարկելու մեջ:

ՀԱՅԹ Հաստատությունը, իր սկզբունքի համաձայն, ազգային խնդիրներին մոտենում է գիտական օբյեկտիվությամբ, համահայկական չափանիշով ու հեռանկարով եւ բացարձակապես զերծ է որեւէ հատվածական շահագրգռվածությունից կամ ազդեցությունից:

ՀԱՅԹ Հաստատության գործունեության հիմնական մասը կազմում է՝
ա) Հայ ազգային ամենակենսական գաղափարների ու խնդիրների բարձրացման, հստակեցման եւ դրանց գործնական լուծման համար՝ գիտահետազոտական ծրագրային աշխատանքների կատարումը, գործակցելով համապատասխան գիտահետազոտական հաստատությունների եւ անհատների հետ:

բ) Այդ աշխատանքների արդյունքները հայության տարբեր հատվածներին, շրջանակներին ու խավերին մատչելի դարձնելը՝ տարբեր մակարդակներով եւ ձևերով:

ՀԱՅԹ Հաստատությունը հիմնադրված է, ղեկավարվում է կամ աջակցություն է գտնում հայության ձակապաշտով մտահոգ եւ կյանքի այլազան բնագավառներում էական փորձառությամբ, տարբեր վայրերում ապրող անձանց կողմից:

ՀԱՅԹ Հաստատությունը որեւէ ձեւով չի կապված, չի ազդված ու առավել եւս չի ղեկավարվում որեւէ քաղաքական, պետական կամ այլ նման կազմակերպության կողմից:

ՀԱՅԹ Հաստատությունը ազգային շահերին հետեւող, գիտահետազոտական ծրագրային բնույթի գործունեությամբ, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, լրիվ անկախ ընկերակցություն է:

1996 թ. փետրվարին երեսնամյա ՀԱՅԲ հաստատությունը կազմակերպեց գիտական սեմինար՝ նվիրված թիվ 10 ծրագրով նախատեսված հարցերի քննարկմանը: Թիվ 10 ծրագրի նպատակն է բնորոշել հայ կնոջ ժամանակակից կոչումը ազգի կենսունակության պահպանման և զարգացման խնդրում, ուսումնասիրելով ու բացահայտելով նրա տոհմիկ կերպարը ու պատմական դերը: Սեմինարում բացման խոսքով հանդես եկավ ՀԱՅԲ հաստատության նախագահ՝ ԲԱԲԿԵՆ ՎԱՐՊԱՆՅԱՆԸ, որը, շեշտելով թիվ 1 և թիվ 10 ծրագրերի առնչություններն ու ընդհանրությունները, պարզաբանեց վերջինի կատարման անհրաժեշտությունը:

ԲԱՅՄԱՆ ԽՈՍՔ

Ի՜նչ նկատառումներով է ՀԱՅԲ հաստատությունը ստեղծել թիվ 10 ծրագիրը, մանավանդ որ այն էապես առնչվում է թ. 1 ծրագրի հետ, որն ունի 2 նյութ՝ հայ ազգային հոգեբարոյագիտություն և Հայ Ազգային Գաղափարախոսություն: Հետեապես՝ դա վերաբերում է հայությանը, նշանակում է՝ տղամարդկանց, կանանց, բոլոր խավերին, բոլոր տարիքային դասերին: Ի՜նչ կարիք կար թ.10 ծրագիրը ստեղծելու: Արդյո՞ք ՀԱՅԲ հաստատությունը տեսնում է տարբերություն կնոջ և տղամարդու միջև: Այս հարցի պատասխանը թե՛ «այո» է, և թե՛ «ոչ», եւ՛ տեսնում է, եւ՛ չի տեսնում: Տարբերությունը նա տեսնում է այնքանով, որքանով բնությունը տարբերություն է ստեղծել: Այն նպատակով, այն ծրագրով, որ ստեղծվել է մարդկությունը և որքանով՝ բնության միջոցով, տրվել են առանձնահատկություններ տղամարդուն և կնոջը, այդքանով ծրագրի մեջ դրված է տարբերություն: Այդ տարբերությունը բնական է և այն պետք է հասկանալ որպես բնության տարբերություն, ինչը ՀԱՅԲԻ կարծիքով Տիեզերական և Հավիտենական Ծրագրի իրագործման համար է տրված: Հարգել այդ տարբերությունը և չեղվել նրանից: Դա բարի, արդար և դրական տարբերություն է,

հետեաբար կատարյալ է, ճիշտ է և օգտակար: Ամեն մի փորձ այդ տարբերությունը վերացնելու, թվում է, կլինի արհեստական և մարդկության դեմ, ազգի շահերի դեմ, հասարակության շահերի դեմ, անհատի շահերի դեմ: Բայց միեւնոյն ժամանակ մարդը նույնն է, և ՀԱՅԲԸ կնոջ ու տղամարդու միջեւ տարբերություն չի տեսնում իբրեւ հասարակական երեւոյթ, հասարակության անդամների՝ ազգի մեջ, մարդկության մեջ, ընտանիքի մեջ և կյանքի բոլոր բնագավառներում ու ասպարեզներում:

Հետեապես, մեր խնդիրը կայանում է համամարդկային այդ բնական էության մեջ տեսնել, ճանաչել հայ ազգի մարդկային նկարագիրը, և այդ նկարագրի մեջ՝ կնոջ տեղը, առանձնահատկությունը: Այստեղից է բխում և այն, որ խնդիր է դրվում բացահայտել հայ կնոջ տոհմիկ կերպարը, նրա պատմական դերը և նշանակությունը, ինչպես նաեւ ապագայի կերտման գործում նրա դերն ու նշանակությունը: Խնդիրը կարելու է այն առումով, որ առանց գիտական հետազոտություններ կատարելու էլ մենք գիտենք, որ շեղված է այդ կերպարը՝ թե՛ տղամարդու, թե՛ կնոջ, և մասնավորապես՝ կնոջ դերը ընտանիքում և հասարակության մեջ: Հայ ժողովուրդը իր պատմության ընթացքում, տարբեր ժողովուրդների, տարբեր մտածելակերպի, տարբեր գաղափարների պետությունների տիրապետության տակ է եղել և չէր կարող չազդվել, ինչքան էլ դիմացել է, պահպանել է իր ուրույնը, և երկար ժամանակ մշակույթի միջոցով, ավանդույթների միջոցով, պինդ կառչել է՝ հաճախ շատ բարձր գին վճարելով, բայց չէր կարող չազդվել: Ազդեցությունն ավելի է ուժեղացել XIX դարի վերջից: Եվ, վերջապես XX դարը բերեց ավելի մեծ ազդեցություն: Սփյուռքի գոյությունը, Հայաստանի՝ Խորհրդային միության մաս կազմելը, տարբեր գաղափարներ, տարբեր կենցաղներ, տարբեր կյանք, տարբեր հոսանքներ, հայացքներ, դաստիարակություն՝ քաղաքական և հասարակական, և այժմ էլ՝ գիտատեխնիկական հեղափոխութե-

յունը (տրանսպորտի, հաղորդակցության միջոցների աննախա-
դեպ կիրառմամբ): Այդ մոտիկությունը կա, այդ միախառնույթ-
յունը կա եւ ավելանում է:

XIX դարից որոշ զարգացած երկրներում եւ նույնիսկ
Ռուսաստանում ու Հայաստանում սկսվեցին կանանց տարբեր
շարժումներ, եւ հիմա՝ ավելի շատ: Էմանսիպացման գործուն
պրոցես, պայքար եւ այլն: Եվ այսօր հայ գիտական միտքը
(այստեղ արդեն կին, տղամարդ չկա) ինչպե՞ս պետք է կարողա-
նա գնահատել այս ամբողջ երեսույթները եւ ինչ հետետություն
պիտի անի իր համար, որպեսզի բնորոշի իր կեցվածքը, իր
հաստատուն տեղը: Շեղումներ կարող են լինել՝ բազմակարծի-
քություն է: Բայց պետք է ի հայտ բերվեն հիմնական
հասկացությունները, եւ հայ գիտական մտքի աշխատանքի
արդյունքը պետք է դառնա ժողովրդի սեփականությունը:

Մենք համոզված ենք (դա ՀԱՅԶԻ տարիների ընթացքում
կատարած ուսումնասիրությունների հետետությունն է), հայույթ-
յունն ունի իր ուրույն նկարագիրը եւ հայ կինը ունեցել է իր
կերպարը, իր նկարագիրը, համեմատության մեջ միշտ եղել է
առաջադեմ (հավասար է եղել, հարգված է եղել, ազատ է եղել,
ազդեցություն է ունեցել): Դա են ապացուցում մեր պատմութ-
յունը, մեր գրականությունը: Բայց իր դերը եղել է ուրույն: Եվ
երեւի մեր նախահայրերը, մեր այն ժամանակվա մտավորակա-
նությունը, լավ են հասկացել, որ երբ գնում ես բնութամբ
պայմանավորված ուղիով, դա եւ՝ գեղեցիկ է, եւ՝ արդար:

Սակայն՝ բացասական շփումների հետետանքով, հայ կինը
մասամբ կորցրել է իր ազատությունը, նույնիսկ՝ հարգանքը: Այս
ամենից նա ուզում է ազատագրվել, սկսվել է շարժում: Ինչպե՞ս
պետք է մենք գնահատենք այս երեսույթը, ճիշտ, թե սխալ:
Ճիշտը նրանում է, որ ճնշումը կա, դառնում է «փոքրամասնութ-
յուն», իսկ նա պետք է լինի հավասար մաս ամբողջականության
մեջ: Հետեւապես, եթե կա ճնշում, կա իրավագրկում, պետք է
լինի հակադարձ ճնշում, գուցե եւ՝ պայքար: Եվ ՀԱՅԶԸ պետք

է գիտականորեն մտնի դրա մեջ, բայց ոչ թե թշնամությամբ:
Կանանց այն շարժումները, որոնք թշնամություն են առաջաց-
նում եւ «մենք» ու «դուք» են առաջ բերում, սխալ են, որովհետեւ
հակաբնական են, եւ՝ վերջին հաշվով, օգտակար չեն: Թերեւս
այս մտորումները պետք է բացատրեն, թե ինչու է ՀԱՅԶԸ
որդեգրել թ.10 ծրագիրը: Որպեսզի այս հարցերը մենք կարո-
ղանանք պարզաբանել գիտականորեն՝ ոչ հասարակական-քա-
ղաքական պայքարի ձեռով: Դա է նշանակությունը: Եթե ինչ-ինչ
հասկացություններ պիտի փոխվեն (իսկ պիտի փոխվի երեւի
շատ բան՝ հասկացության մեջ, ընկալման մեջ, արտահայտման
մեջ, կենցաղավարության մեջ), ապա փոխվի շինարար իմաս-
տով, հիմնարար իմաստով եւ ոչ թե՝ քանդելու: Մենք պետք է
բնորոշենք, թե որն է ճիշտը, ինչն է տկարացել եւ պետք է
զորացնենք, եւ որն է աճել քաղցկեղի նման՝ ինչ-որ ուռուցք է,
այն հանենք: Բայց հակառակը չանենք՝ հանկարծ, առողջը
չհանենք: Սա կարող է լինել: Հնարավոր չէ ցավ չզգալ, երբ
տեսնում ես, որ ազատություն ասելով, հասկանում են գռեհ-
կություն (ծխել եւ այլն): Սա ամենեւին հավասարություն չէ,
նույնիսկ անհավասարություն է, վիրավորական է: Եվ, վերջա-
պես, կա սերնդի հարցը՝ Աստվածային նպատակը, որ բնության
միջոցով առաջացրեց մարդկության առանձնահատկությունները:
Հայ կինը կենսական դեր ունի կատարելու հասարակության
մեջ, եւ հարցը այն է, թե արդյոք կատարում է: Եթե
յուրաքանչյուր մարդ-եակի խնդիրը կատարյալ լինելն է, դրանից
ավելի բան չկա: Կատարյալ լինելու իսկական ճանապարհն այն
է, որ դու հասկանաս ճիշտ եւ կատարես քո բնական դերը:

Հայ կնոջը հատուկ է նվիրվածությունը ընտանիքին, երեխա-
յին: Եվ երբ մենք որդեգրում ենք այս ազատականացած
կենցաղավարությունը, գաղափարախոսությունը, արդյոք դա օգ-
տակա՞ր է նոր սերնդի շահերի համար:

Գիտականորեն մոտենալով այս հարցին, մտքից չպետք է
հանել, որ ի վերջո, կնոջ համար տղամարդը՝ դա հայրն է:

ամուսինը, եղբայրը, որդին, եւ տղամարդու համար կինը՝ դա մայրն է, ամուսինը, քույրը, դուստրը: Ու՛մ դեմ եմ պայքարում, ո՛վ է ինձ ձնշում...

Բնությունը գիտցել է, ինչ է արել: Եթե գիտությունը չհասկանա բնության օրինաչափությունները, իսկ՝ առավել եւս, պետությունը, կառավարությունը եւ ազգի առաջնորդները չհասկանան եւ ըստ այնմ կյանքը դասավորեն, այն ժամանակ գուցե սխալվենք (եւ անպայման կսխալվենք) եւ արդյունքը կլինի բացասական: Ինչ չափի բացասական, կախված է նաեւ ուրիշ գործոններից:

Ահա այս է նպատակադրումը, այսպես է տեսնում ՀԱՅԶԸ Թ.10 ծրագիրը: Եվ, թեպետ Թ.1 ծրագրի հետ էությամբ նույնն է, բայց ունի որոշ յուրահատկություններ, ուրեմն նպատակահարմար է, որ դիտվի, ուսումնասիրվի նաեւ առանձին, եւ հետետությունները ներկայացվեն մեր ժողովրդին:

Եվ մի հանգամանք եւս, որ կարծում ենք հարկ է նշել: Կանանց հարցերով սովորաբար, կարծես թե, միայն կանայք պետք է մտահոգված լինեն ու զբաղվեն: Այս է ցույց տալիս թե՛ միջազգային եւ թե՛ ազգային փորձը:

ՀԱՅԶԻ պարագային, երբ հայ կինը դիտվում է նախ եւ առաջ որպես մարդ էակ, իսկ իր սեռական առանձնահատկությամբ՝ հայ տղամարդու մայրը, քույրը, ամուսինը եւ զավակը, ապա 10-րդ ծրագրի կատարումը եւ դրա հարակից հարցերը բնականաբար չեն սահմանափակվում հայ կանանց շրջանակով: ՀԱՅԶԸ գտնում է, որ դա հայ ժողովրդի մարդկային ու ազգային խնդիրն է: Հետեւապես հայ տղամարդը, տվյալ դեպքում գիտնականը, մտավորականը, գործիչը, հավասար չափով, եթե ոչ ավելի, պետք է շահագրգռված լինի, պարտականություն զգա եւ իրեն համապատասխան մակարդակով մասնակցի ծրագրի եւ դրա հարակից խնդիրների իրագործմանը:

ՀԱՅԶԸ պատրաստ է իր 10-րդ ծրագրի, ինչպես եւ մյուս ծրագրերի կատարման ասպարեզը բաց պահել բոլոր ցանկացողների համար:

ԷՂՈՒԱՐԴ ՂԱՆԻԵԼՅԱՆ (պատմ. գիտ. դոկտոր)

ՀԱՅ ԿԻՆԸ՝ ՕԶԱԽԻ ՊԱՀԱՊԱՆ

Հայ ժողովրդի անցած պատմական ուղու վրա հայ կինը խորհրդանշել է մեր ազգի բարոյականությունը, բարությունն ու հարատևությունը: Հայ կնոջ կերպարն ազգային դիցարաններում մարմնավորվել է որպես մայրության, սիրտ, լույսի ու գեղեցկության արտահայտություն, իսկ պատմության մեջ որպես հայրենասիրության, անձնագոհության, հերոսության կերպար: Նրա առաքինություններով են բնորոշվել ընտանեկան հավատարմությունը եւ հայրենի օջախի ամրությունը: Հայ կինը որքան զթափրտ, նույնքան էլ անողոր է թշնամու հանդեպ:

Հայ Առաքելական եկեղեցին սրբազործել է հայ օջախի պահպան մոր կերպարը, իսկ ազգապահպան շնորհով օժտված եկեղեցին՝ դարձել հայ ընտանիքի հոգետը պահպանը:

Հայ ընտանիքը հայրենիքում եւ Սփյուռքում հայոսիտ անկյոտրում կամքի շնորհիվ մնաց մեր ժողովրդի հարատևության խորհրդանշելը:

Հին հայոց ազգային դիցարանում մայրության, սիրտ, լույսի ու գեղեցկության մարմնավորումն էին Անահիտը, Նանեն, Աստղիկը, Ծովինարը: Զրիստոնեության արշալույսին (Ա դար) սուրբ նահատակների լուսապսակին արժանացան Սանատրուկ թագավորի դուստր Սանդուխտը եւ իշխանուհի Զարմանդուխտը: Երկու դար անց Հայոց հողում սրբացան Հռոմեական կայսրությունից Դիոկղետիանոս կայսեր հետապնդումներից հալածված քրիստոնյա Հռիփսիմյան կույսերը: Նրանց նահատակությունը խորը հետք թողեց հայ կնոջ հոգետը կյանքում:

Հայ ազգի հարատևությունը մեծապես պայմանավորված է ընտանեկան օջախը սրբությամբ պահպանելու հայ կնոջ նվիրվածությամբ: Անհրաժեշտության դեպքում հայ կինն իր ամուսնու կողքին հավասարապես կիսել է բոլոր զրկանքները՝ հանուն

Հայրենիքի ազատագրման վեհ գործի: V դարից մեզ են հասել հայ կնոջ անձնագոհությունը վկայող հուզիչ դրվագներ: Ս. Վարդան Մամիկոնյանի գլխավորած Հայոց պատերազմը նկարագրելուց հետո, Եղիշեն գրել է. «Երանելի առաքինիների եւ կապվածների ու պատերազմում ընկածների կանանցն ամբողջ աշխարհում ես հաշվել չեմ կարող... Հայոց աշխարհի փափկասուն տիկնայք, որոնք փափուկ կյանքով ու քնքուշ մեծացել էին բազմոցների ու գահավորակների մեջ, շարունակ բոքիկ ու ոտքով էին գնում աղոթատները...»: (Եղիշե, Վարդանի եւ Հայոց պատերազմի մասին, Ե., 1989, էջ 372):

Հոգեթով են Վարդան Մամիկոնյանի դուստրերը՝ Վարդենի-Շուշանիկը եւ Վարդանուշը: Ս. Շուշանիկի մասին Յուրտավի եպիսկոպոս Հակոբը (476-484) գրել է «Վարք սրբոյ Շուշանկան»: Ս. Շուշանիկն ամուսնացած էր եւ մայր էր: Նրա ամուսինը՝ վրաց Աշուշա Բդեշխի որդին՝ Վազգենը, պարսիկներից արտոնություններ ստանալով, հրաժարվում է քրիստոնեությունից եւ զրադաշտություն ընդունում: Վրաց օջախում Ս. Վարդանի դուստրն իր առաքինության պատճառով դաժանորեն խոշտանգվում է իր իսկ ամուսնու ձեռքով: Նահատակ Շուշանիկի պայծառ անունը թե՛ հայ, եւ թե՛ վրաց ժողովուրդների կողմից սրբացվեց: Ս. Շուշանիկը համարվել է «Հայ գաղափարական կնոջ միջնադարյան իդեալը» (Մ. Ավդալբեգյան, Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը (Ե դար) Եր., 1971թ., էջ 158): «Նրա կերպարում առաջին անգամ հայ գրականության մեջ մարմնավորվել է նաեւ կնոջ ազատագրման գաղափարը» (Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հ.1, Եր., 1944, էջ 354):

Հայ կնոջ առաքինություններով է բնորոշվում մեր ազգի մեջ դարերով արմատացած ընտանեկան հավատարմությունն ու օջախի ամրությունը:

Փառանձեմ թագուհին օտարոտի Օլիմպիայի ունձգությունից պահպանեց իր՝ Հայոց արքունի օջախը, իսկ երբ հերթը հասավ Հայրենիքի պաշտպանությանը, Հայոց թագուհին աննախադեպ

անձնագոհությամբ զենքը ձեռքին կռվեց թշնամու դեմ՝ դրսևորելով գորավարի կամք: Հերոսուհի հայ կանայք մարմնավորել են ազգի հարատևության աստվածաշնորհ գաղափարը, մինչդեռ համաշխարհային պատմության մեջ տիրառչակ Շամիրամի Հայոց թագավոր Արա Գեղեցիկին եւ մեր երկրին տիրանալու վավաշուտ ցանկությունը կանխորոշեց Ասորեստանի կործանումն ու անհետացումը պատմության ասպարեզից: Հայկազուն Արայի մահվան պատճառ դարձած Շամիրամի բնութագիրը տվել է Մովսես Խորենացին. «Շամիրամը հաճախ իր որդիներից հանդիմանվելով իր սաստիկ վավաշուտ եւ անառակ վարքի պատճառով նրանց բոլորին կոտորում է ...: Նա իր ամբողջ իշխանությունն ու գանձերը բարեկամներին ու սիրեկաններին պարգեւելով որդիների մասին ամենեւին հոգ չէր տանում: Նրա ամուսինը, «գիտե՞նալով նրա ախտասեր եւ չարասեր բարքը, թողեց թագավորությունը եւ փախավ...» (Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց):

Շամիրամի չարագուշակ կերպարը դժբախտության մարմնավորում է ընտանիքի եւ երկրի համար բոլոր ժամանակներում: Շամիրամի եւ հայ կանանց կերպարների գուգադրումներով էլ ավելի է ընդգծվում մեր միջնադարյան պատմիչների բնութագրած հայ նվիրյալ կնոջ պարզ, մաքուր ու սուրբ կերպարը, որը քրիստոնեական վերածննդի ժամանակ խորհրդապաշտվեց Սուրբ Մարիամ Աստվածածնի հոգետր ուժով: Շարականներում գովերգվում է՝ «Ուրախ լեր մայր Լուսյ Մարիամ... Արեգականն Օթարան»:

Հայ Առաքելական եկեղեցին սրբազործեց հայ օջախի պահպան մոր կերպարը: Ս. Մարիամը պատկերվել է հայ կնոջ դիմագծերով: Ազգապահպան շնորհով օժտված եկեղեցին դարձավ հայ օջախի հոգետր պահպանը:

Հիշարժան է հայ կնոջ հոգու վեհության եւ գթասրտության մարմնավորում տիկին Շուշանը: Նա իր տանն ապաստան տվեց Վարդանակերտի ձակատամարտում (703) Հայոց իշխան Սմբատ Բագրատունուց ջախջախիչ հարվածներ ստացած 300 արաբների: Տիկին Շուշանն ընդառաջ ելավ Հայոց իշխանին եւ «Բագուն

աղերսանքներով ու խնդրանքներով փրկեց նրանց մերկ, բոկոտն, հետիոտն եւ վիրավոր վիճակում, որոնց վերցնելով իր մոտ, վերքերը կապեց, առողջացրեց եւ հանդերձներ հագցրեց: Տվեց նաեւ գրաստ իր երամակից եւ առաքեց Իսմայելի իշխան Աբդուլ-Մելիքի մոտ, որի համար նրանից մեծ շնորհակալության եւ մեծամեծ պատիվների արժանացավ» (Ղեւոնդ, Պատմություն Հայոց, Ժ): Խղճով էր թշնամին, վեհ էր հայ իշխանուհու վարմունքը:

Հայ կինը որքան գթասիրտ, հարյուրապատիկ անգամ ավելի անողոր է թշնամու հանդեպ: Եթե Ս. Սանդուխտը, Ս. Հռիփսիմեն եւ նրանց ընկերուհիները նահատակվելով սրբացան հանում հավատի, ապա Այծեմնիկ անունով մի գեղեցիկ ու անարատ հայ աղջիկ սրբացավ իր կյանքը Հայրենիքի ազատությանը նվիրված պայքարում զոհաբերելով: Ականատես պատմիչ Սամուել Անեցու վկայությամբ, 1126 թ., Այծեմնիկը «առնացի ստացեալ սիրտ» քարերով հարվածում էր Անիի պարիսպները մագլցող թուրք-սելջուկներին՝ «առ ոչինչ համարելով նետերից ստացած վերքերը»: Այծեմնիկը հենց այստեղ էլ զոհվեց՝ դարեդար հիշատակվելով որպես հերոսուհի: Հիրավի անձնագոհության վառ դրսևորում: Այծեմնիկը արհամարհելով ստրկությունն ու մահը, Զրիստոսակոյ ճանապարհով գնաց դեպի հավերժություն:

Այծեմնիկները փրկել են հայոց պատիվը: Թուրք զազանների բթացած հայացքների առջեւ հազարավոր առեւանգված հայուհիներ են իրենց նետել ժայռերից՝ փրկելով ազգն անարգանքից: Այծեմնիկներն են պաշտպանել հայ օջախն ու Հայրենիքը, Սասունի, Զեյթունի, Վանի հերոսամարտերում: «Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհի» առյուծաքած սրտով թուրք ելուզակների գլխներին հսկա քարեր ու կրակ էին թափում, բայց եւ մեծ քնքշանքով ու գորովով էին խնամում իրենց վիրավոր այրերին:

Սոսե մայրիկը չքեց իր վիրավոր ամուսնուն՝ Սոխորդի, Նեմրութի ու Բարշենի առասպելական հերոս Աղբյուր Սերոբին՝ ուժերի գերլարումով լեռան գագաթը բարձրացրեց: Ազատասեր արծիվներն արեգակնամերձ լեռնագագաթներին են կնքում իրենց

մահկանացուն: Դաժան Եղեռնն էլ չկտրեց հայ կնոջ կամքը: Նույնիսկ արյան հեղեղի մեջ էլ նա փրկում էր հոգեւոր արժեքները՝ ձեռագրերը, որոնց ստեղծմանն էլ է ինքը մասնակցել: Հռիփսիմեն, Մարիամ, Մարգարիտ, Հեղինե... նվիրական անուններ, որոնք պահպանվել են նրանց գրչագրերում (Ա. Գետրոյան, Սյունիքի, Վայոց ձորի եւ Որոտանի մանրանկարիչները, անտիպ):

Հայ ընտանիքը Հայրենիքում եւ Սփյուռքում հայ կնոջ անկտրում կամքի շնորհիվ, մնաց մեր ժողովրդի հարատեւության գրավականը: Հիրավի, կինը «պիտի ապրի, -ասում է Պողոս առաքյալը,- որդեծնության համար, եթե մնա հավատով եւ սիրով եւ սրբությամբ՝ պարկեշտությամբ հանդերձ» (Ա. Տիմոթ.Բ,15):

* * *

ԺԱՄՄԵՆ ԱՂԱՍՅԱՆ

ՀԱՅ ԿՆՈՋ ՏՈՀՄԻԿ ԿԵՐՊԱՐԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հոլովածը նվիրված է ազգային կյանքի հիմքերից մեկի՝ հայ կնոջ տոհմիկ նկարագրի վերաճանաչմանը ըստ գրականության: Վերջինս արտացոլում է հայուհու հնարավորինս ամբողջական կերպարը, որը հեթանոս ու քրիստոնյա ավանդների միախառնմամբ ներկայանում է իբրեւ բարձր բարոյականության կրող: Հեղինակը կարեւորում է այն, որ գրականության մեջ հայ կնոջ կերպարը, որքան էլ գեղարվեստական, ունի իր պատմական, իրական նահատիկները, ինչն ակնկալելի է դարձնում այդ կերպարի կարեւորագույն որակները կրող հայուհու դաստիարակությունը:

Հայ ժողովրդին բնորոշ հատկանիշները, որոնք արտահայտվել են արդեն էթնիկական ձեւավորման շրջանից, դարերի

հորձանուտներում ենթարկվել են փոփոխությունների, ցավոք, հաճախ անդարձելի աղարատումներով: «Մեր կյանքի հիմերն անդունդն ընկան եւ արնոտ միգում ճարձատում են դեռ»։ 20-րդ դարի սկզբին մեր մեծագույն բանաստեղծներից Եղիշե Չարենցը, անդրադառնալով հայոց ազգային ողբերգությանը, անողոր ճշգրտությամբ տալիս է եւ մեր բարոյական նկարագիրը՝ հանդիպադրելով ազգային բարոյականության անդրանիկ բարձրագույն վկայագիր «Արա Գեղեցիկ եւ Շամիրամ» առասպելին:

*Այլ է աշխարհը հիմա, այլ է հիմա Նաիրին,
Ոչ մի արթա էլ չկա, որ չտրվի թո հրին:*

Ճավոք գայթակղումը եւ բարոյական ապազգայնացումը շարունակվում է դարավերջին:

Մինչդեռ ազգային գոյության հարատեւումը պահանջում է ինքնամաքում, ազգային իրական արժեքների վերաճանաչում եւ դրանք կրող սերնդի դաստիարակում:

Այդ արժեքները պիտի փնտրենք եւ գրականության մեջ, քանզի, ներառելով նաեւ բանահյուսությունն ու պատմագրությունը, այն պահպանել է հայի ամբողջական կերպարը:

Ինչպիսի՞ն է, օրինակ, հայ կնոջ տոհմիկ կերպարն ըստ գրականության: Արտացոլված մի շարք որակներ իրոք ազգային են եւ բնութագրում են հայ կնոջն առհասարակ՝ թագուհուց մինչեւ շինական: Ամբողջության մեջ այդ կերպարը ներկայանում է իբրեւ հեթանոս եւ քրիստոնյա ավանդների լավագույն միահյուսում:

Ազատականություն եւ հավասարություն: Հայաստանում կինն առանձնապես ստրկացված չի եղել որեւէ, նույնիսկ ստրկատիրության, շրջանում (հնագետ-պատմաբան Կարո Ղաֆադարյան): Այս շրջանի հայտնաբերված հայկական դամբարանում քարի վրա պատկերված են իրար ձեռք բռնած տղամարդ ու կին, որը նրանց միասնության ու սիրո ուխտի վկայումն է: Իսկ «Սասունցի Դավիթ» էպոսն իր հերոսուհիների մասին ասում է. «Առյուծն առյուծ է՝ եգ լինի, թե ործ»: Այդպիսին է եւ «Տորք Անգեղ» առասպելի դյուցազնուհի Հայկանուշը:

Այս ազատությունը սակայն, իրացվել է յուրաքանչյուրին հատկացված ոլորտում: Հայկական ասացվածք կա. «Տղամարդը որ կա՝ դրսի պատ է, կնիկը որ կա՝ ներսի պատ»:

Հայոց պատմությունը ներկայանում է իբրեւ մաքառումների պատմություն. եթե ֆիզիկական պայքարը մղել է տղամարդը, ապա հոգեւոր պատերազմը վարել է կինը: Միայն հայկական հասարակական-քաղաքական միջավայրը, առանձնապես սահմանափակելով կնոջ գործունեությունը, նրան մղել է ներմաքումն ու նրբացման: Ուստի պատահական չէ, որ հայ կնոջ կերպարն առավել խտացված է գրականության մեջ՝ որպես մոր, կնոջ ու քրոջ: Իբրեւ մայր՝ հայ կինը ներկայացված է երկու հիմնական գծերով:

1. Բոլորանվեր եւ անսահման նվիրվածություն: Մայրական սիրո անփոփոխ ու անդավաճան լինելը եւ անձնուրացությունը լավագույնս ներկայացված են Խսահակյանի «Մայրը», «Մոր սիրտը» եւ այլ ստեղծագործություններում: Բանաստեղծի նույնիսկ ամեն ինչ ժխտող հերոսը՝ Աբու-Լալա Մահարին, միակ սուրբ է համարում մայրական գիրկը: Ինքը՝ Խսահակյանը, ասում է. «Արժեր ծնվել թեկուզ միայն մայր ունենալու համար»: Իսկ Հ. Շիրազի մայրապաշտությունը հասնում է աստվածամարտության. «Երբ մայրը կա, էլ ինչ Աստված»:

Աշխարհում ամեն ինչից հոգնած ու տառապած մարդու համար միակ անխաբ սերը, ըստ Չարենցի, մնում է մայրականը («Մորս համար գազել»): Մայրը նույնպիսի սրբություն է մեր մյուս մեծերի՝ Թումանյանի, Տերյանի, Պ. Մեակի եւ այլոց համար:

2. Հայրենիքի պատկերի խորհրդանշում: Հայ մայրը որդու դեմ ըմբոստանում եւ դառն խոսքեր է ասում, երբ վտանգված է հայրենին: Այդպիսի զգաստացնող կերպարներ են՝ Արքայամայրը (Ն. Զարյան, «Արա Գեղեցիկ»), Մամիկոնյան մեծ տիկինը (Դ. Դեմիրճյան, «Վարդանանք»), Մերութան Արծրունու մայրը (Րաֆֆի, «Մամվել»), Սիամանթոյի («Հայրենի հրավեր»), Վարուժանի («Կարոտի նամակ») հերոսուհիները: Այս հատկանիշի առասպելացումն է հայ մամիկի կերպարը: Ջուր չէ, որ հայերս հայրենիքը,

հողն ու լեզուն «մայր» ենք կոչում:

Գրականության մեջ, բնականաբար, առավել հարուստ է ներկայացված հայուհու՝ իբրեւ կնոջ կերպարը՝ որպէս բարձր բարոյականություն կրողի: Նրա տարրալուծումն ի հայտ է բերում հետեւյալ որակները:

Անձնագոհություն: Հանուն հայրենիքի, ժողովրդի, յուրայինների զոհվելու պատրաստականություն. Ծովինար («Մասունցի Դավիթ»), Ռուզան (Մուրացան, «Ռուզան»):

Խորապէս սիրող ու անքեն հոգի: Լավագույն կերպարներից է Թոթովենցի մայրը («Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա»): «Կինը, եթե սիրի, լեռան ծանրություն կարող է կրել իր հոգում»: Ամուսնու մահվանից հետո նրա սիրուհուն ծանրոց է ուղարկում, մղկտալով, թե այդ կինն էլ որք մնաց: «Սիրելով հորս՝ սիրում էր եւ նրա մեղքերը»: Սրբունին («Եմիրճյան, «Ավելորդը») լքում են թուրքից փախչող եղբայրն ու նրա ընտանիքը, բայց անդամալույծ ջուրը վերջին պահին նրանց է նվիրում իր գործած գուլպաները, որ չմըսեն ճամփին:

Խոնարհություն: Դարձյալ լսենք Թոթովենցին. «Կարծում եմ, որ աշխարհում եղել են երկու քրիստոնյա, մեկը ինքը՝ Քրիստոսը, մյուսը՝ մայրս, հայ»: Հատկապէս վերջին երկու հատկանիշների շնորհիվ խաղաղությունն է թագավորել հայ օջախում:

Արժանապատվություն: Նվիրվածությունն ու խոնարհությունն ամենեւին էլ ստրկամիտ չեն դարձրել հայուհուն. վկա՝ Նուարդը («Արա Գեղեցիկ»), Փառանձեմ թագուհին (Չորյան «Հայոց բերդը»), Փառանձեմը («Վարդանանք»), Սաթենիկը (Խանգաղյան, «Մխիթար սպարապետ»), Մարգարիտը (Շիրվանզադե, «Պատվի համար»), Սառան (Նար-Դոս, «Սպանված աղավնի»):

Իմաստունություն: Անահիտ (Ղ. Աղայան, «Անահիտ»):

Կենսունակություն: Օվսաննա (Սեւդա Սեւան, «Ռոդոսթո, Ռոդոսթո»), Աղուն (Հ. Մաթետսյան, «Ծառերը»): Վերջինս, լինելով մերօրյա հայուհու կերպար, վկայում է հայ կնոջ այս որակի անկորնչելի լինելը:

Հոգեկան հարուստ աշխարհ: Անուշ (Թումանյան, «Անուշ»), Շուշանիկ (Շիրվանզադե, «Քաոս»), Թագուկ (Չոհրապ, «Առջի սեր, առջի բարի»): Այս հատկանիշի շնորհիվ է հարկ եղած դեպքում հայուհին բարձրացել շրջապատից՝ ի զարմանս նույնիսկ յուրայինների:

Անանձնական սեր: Սա արդեն հայկական համամարդկայնության դրսեւորում է: Հայ կինն օրհնում ու բարին է կամենում նեղության մեջ գտնվող յուրաքանչյուրին: «Աստված թող բոլորին հասնի, հետո էլ՝ իմ զավակներին»: Իսահակյանի մայրական քնարերգությունը այս սիրո արտահայտությունն է:

Հայրենասիրություն եւ քաջություն: Հայ կինը տղամարդուն հավասար իրեն պատասխանատու է զգում հայրենիքի համար. Նուարդից («Կենծացնեմ իմ որդուն, եւ նա կառնի հայկյան աղեղը մեծ») մինչեւ մարտնչող, զինավառ հայուհիներ՝ Վարդանանց պատերազմի տիկնանց գունդ, Անիի պաշտպան Այծեմնիկ, Դավիթ-Բեկին աջակից սյունեցի կանայք («Մխիթար սպարապետ»), 20-րդ դարի ազգային-ազատագրական շարժման կին մասնակիցներ: Աղբյուր Մերոբի կինը՝ Սոսեն (Դաշտենց «Ռանչապրների կանչը»), օժտված է էպիկական հերոսական գծերով. նույնիսկ Ձենով Օհանի պես գորեղ ձայն ունի, եւ Անդրանիկը հեռվից լսում է նրա օգնության կանչը:

Ազգային ոգու պահպանություն: Իսահակյանը նկարագրում է («Անպարտելի ոգին») 1915 թ. սպանդից մազապուրծ հայերի կյանքը անապատում՝ ըստ ականատեսի. մայրերը անապատի ավազը գիրք ու տետրակ էին դարձրել հայ մանուկների համար եւ ուսուցանում էին նրանց: Հայ կնոջ՝ գրականությամբ ներկայացված այս ազգապահ որակի առկայության մասին է վկայում եւ այն պատմական փաստը, որ եղեռնի օրերին 2 հայ կին կիսել են հայրենի ամենաձանր մագաղաթյա ձեռագիրը՝ «Մշո ճառընտիրը» եւ շալակած հասցրել Արեւելյան Հայաստան:

Հայ կնոջ այս նկարագիրը եւս պիտի օգնի վերծանելու այն առեղծվածը, թե հայոց պատմության «դժվար ու խավար ճամփին» ինչպես են պահպանվել ու մեր օրերը հասել

«գանձերն անգին» (Թումանյան):

Առաքինություն: Այս մեկ բառով բնորոշվող՝ հայ կնոջ հավաքական լավագույն կերպարը ստեղծել է Եղիշեն: Նրա «Վարդանանց պատմությունն» ավարտվում է հուզիչ ներբողով՝ առ տիկնայք փափկասուն Հայոց աշխարհի: Հայոց այրերը զոհված էին կամ գերի, եւ այս ձոնն ընկալվում է իբրեւ կոչ-ձեր ձեռքին է հայրենին, պահե՛ք այն: Այսօր նորից Ավարայր է, եւ հայ կինը պիտի դառնա դեռեւս 5-րդ դարում հայուհուն բնութագրած բարձր բարոյականության ժառանգորդը:

Հայ կնոջ գրական կերպարը հարստացնում է նրա մեկ այլ դրսեւորումը՝ քույր լինելը, որը ենթադրում է նշված որակների բարձրագույն արտահայտություն:

Կյանքի դժվարագույն պահերին մեր լավագույն բանաստեղծները սիրած էակին՝ խոնարհ, գթասիրտ, առաքինի, խնդրել են... լինել ավելին՝ քույր:

Այսօր եղիր քոջ պես...

Եվ այնքան հեզ եք ու այնպես քույր...

(Տերյան)

Հոգիս այնպես կարոտ է ատրք

Մտերմության... Եղի՛ր ինձ քույր...

(Չարենց)

Բո՛լոր իմ նազելի, նայիր քո դիմաց՝

Վիրավոր, ավեր սիրտս եմ բացել...

(Իսահակյան)

Դու քո ճամփեն գնա, քույրիկ...

(Թումանյան)

Անշուշտ, նշված որակները ներկայացնում են հայ կնոջ իդեալական կերպարը: Բայց գրականությունն էլ հենց կոչված է իդեալներ տալու կյանքին: Բացի այդ, գրականության մեջ հայ կնոջ կերպարը, որքան էլ գեղարվեստական, ունի իր պատմական, իրական նախատիպերը: Առավել կարեւոր է, որ այսօր ինքը կարող է իբրեւ նախատիպ ծառայել ապագա հայ կին սերունդը ձեւավորելու համար:

ՀԱՅ ԿԻՆԸ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅԶԱՐՈՒՄ

Դարեր շարունակ մղած ազգային-ազատագրական պայքարում ի հայտ եկավ հայի ազատատենչ ոգին, որի հավերժացման փարոսն եղավ Վարդանանց պատերազմը: Այդ ազգային-ազատագրական պայքարում իր խորը հոգեբարոյական ազդեցությունն է ունեցել հայ կինը, որի ազգապահպան դերը մշտապես եղել է մեր պատմիչների ու հոգևոր գործիչների, վիպասանների ու բանաստեղծների ուշադրության կենտրոնում: Հայ կինը խորհրդանշել է ազգի բարոյականությունը, բարությունն ու հարստեությունը:

Ազգային-ազատագրական շարժմանը մասնակցած հայ կնոջ կերպարին էին նվիրված ԾՈՂԻԿ ՊՈՂՈՍՅԱՆԻ՝ «Խոնարհի հերոսներ» եւ ՌՈԶԱ ՓԱՇԻՆՅԱՆԻ «Հայ կանայք արցախյան շարժման մեջ» երկերները:

«Ուրֆայի հայ կանայք ամբողջ հերոսական դիմադրության տետղությանը իրենց կորոպով, իրենց տոկուն անձնվիրությամբ եւ մանավանդ անօրինակ քաջասրտությամբ ոչ միայն ոչնչով ետ չմնացին իրենց եղբայրներից ու ամուսիններից, հապա եւ հաճախ գերազանցեցին նրանց, վասնզի հոգիների գերմարդկային ձիգով կարողացան իրենց կանացի թուլությունը մինչեւ առնական անվեհերությունը բարձրացնել»:

Ավետիք Ահարոնյանի այս անմահ խոսքերը նվիրված են հայ ժողովրդի պատմության ազգային-ազատագրական պայքարի փայլուն էջերից մեկին: Ուրֆայեցի կանանց հերոսական պայքարն իր արտացոլումը գտավ 1905 թվին Անդրկովկասի քաղաքների ու գյուղերի հայության վրա թաթար-ազերիների հարձակումների ժամանակ ինքնապաշտպանական կռիվներում մարտնչող կանանց՝ տիկին Շեկ-Հովսեփյանի, օրիորդ Աննայի, բժշկուհի Մարգարիտ Մելիք-Բեգլարյան-Օհանյանի եւ շատ ուրիշների կերպարներում:

Տարոնի, Վասպուրականի, Շապին-Գարահիսարի, Հաճնի, Մուսա Լեռան դիմադրության կռիվներում հերոսացան ու նահատակվեցին շատ կանայք: Իրենց քաջությամբ ու հերոսությամբ աչքի ընկան Սոսե մայրիկը, Շենիկցի Շաքեն, Մշո դաշտի սուրհանդակ Մարիամը:

1941-45թթ. իրենց հայրերի, եղբայրների ու ամուսինների հետ կողք-կողքի հարյուրավոր կանայք հերոսաբար մարտնչում էին Երկրորդ համաշխարհայինի դաժան օրերին: Նրանցից շատերի անուններն առհավետ գրանցվեցին պատմության էջերում:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի վառ դրսևորումներից է Արցախյան պատերազմը, որի ժամանակ ի հայտ եկան բազմաթիվ Սոսե մայրիկներ, որոնք կրկին հաստատեցին հայ կնոջ ազատատենչ ոգին: Կրկնվեց Վարդանանց Մեծ պատերազմը: Այս անգամ արդեն ուռքի կանգնեցին արցախցի շուշանիկները: Հաթերթում ստեղծվեց կանանց ինքնապաշտպանական ջոկատ, որը ղեկավարում էր Հայրենական Մեծ պատերազմի մասնակից, Սոսե մայրիկի կերպարը մարմնավորող Բնարիկ Սիմոնյանը: Զոկատն անձնագոհաբար թշնամու ճիրաններից ազատեց 13 պատանդ: Արցախի պայքարում զենքը ձեռքին կռվում էին արցախցի Ժաննան, Երեսանցի Աղավնի Ստեփանյանը, Էջմիածինցի Գայանե Մեժլումյանը: Հաղորդի պատերազմում հերոսի մահով ընկան եւ անմահացան բուժքույրեր Ռուզան Եսայանը եւ Հեղինե Բդոյանը: Պատերազմի դաշտում կենաց ու մահու պայքար էր մղում նաեւ 53-ամյա Կիմա Պետրոսյանը:

Մեծ է հայ կնոջ դերը եւ նշանակությունը հայ ժողովրդի ապագայի կերտման գործում: Այդ իմաստով հոգեբանական մեծ խորհուրդ է ամփոփված Գարեգին Նժդեհի մարգարեական խոսքերում. «Մայրերի ափերի մեջ պետք է փնտրել ազգի ճակատագիրը»:

* *
*

Զեկուցումների հաջորդ խմբում ամփոփված են հոգեբան, մանկավարժ-փորձագետների համակարգված ուսումնասիրությունների արդյունքները: Վերլուծությունները կատարվել են բացահայտելու համար այն եզրերը, որտեղ կի՛նը՝ իր մեջ ուժ ու կորով գտնելով պահպանելու ազգային դիմագիծը եւ հավատարիմ մնալով իր պատմական առաքելությանը, կարողանա ամբողջությամբ դրսևորել իր լիիրավ ունակությունները նորանկախ Հայաստանի ապագայի կերտման գործում:

Հատկապես կարևորվել է նրա դերը մատաղ սերնդի դաստիարակության, ընտանիքի, ազգային ավանդույթների, ինչպես նաեւ ազգային հոգեբանության կայունության պահպանման գործում:

Թանկ գին է վճարել մեր ժողովուրդը պահպանելու նախնայաց մեզ ավանդած բարոյահոգեբանական արժեքները, որե՛մն պարտավորեցնող է մեզ տրված աստվածաշնորհ այդ Սուրբ ժառանգության պահպանումն ու իրականացումը:

Փորձագետ-հոգեբան ՎԱԶԳԵՆ ԴՈՂՈՍՅԱՆԻ զեկուցումը վերնագրված էր՝ «ԿԻՆԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ»

Հաստատելով նախորդ զեկուցողների այն պնդումը, որ մեր պատմության ամբողջ ընթացքում կի՛նը վճռորոշ իրադարձությունների մասնակիցն է եղել, նա անդրադարձավ այն հարցին, որ ներկայումս կնոջ դերի բարձրացման, հզորացման ձգտումը վերաճել է շարժման: Այդ հարցի վերաբերյալ մտքերի լայն փոխանակություն է գնում: Դրան էր նվիրված նաեւ 1995 թվի սեպտեմբերին Զինաստանի մայրաքաղաք Պեկինում տեղի ունեցած կանանց միջազգային համաժողովը, որի հիմքում ընկած էր ՄԱԿ-ի Մարդկության զարգացման 1995 թվի համաշխարհային զեկույցը, ըստ որի որոշումներ ընդունելու բնագավառում կանանց դրությունը աշխարհի երկրներում շարունակում է մնալ անհավասար: Համաձայն այդ զեկույցի, համաշխարհային տնտեսությունը 11 տրիլիոն ամերիկյան դոլար պակաս է ստացել այն պատճառով, որ կանանց աշխատանքը կամ չի վարձատրվում, կամ դա անբավարար չափով է կատարվում:

Համաձայնելով այն մտքին, որ կանանց շարժման հիմքում լուրջ խնդիրներ են դրված, զեկուցողը նշեց, որ լայն առումով այդ խնդիրները չեն վերաբերում զուտ կանանց. կնոջ իրավունքները նույն՝ մարդու իրավունքներն են, միայն յուրահատուկ մասնավորմամբ:

Հայ հոգեբանը այս խնդրին ցանկացավ մոտենալ այլ տեսանկյունից՝ վկայակոչելով Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի կարծիքն այն մասին, որ սխալ է կնոջ եւ տղամարդու հավասարությունը տեսնել թվի, դիրքի կամ պաշտոնի մեջ: Խտրության գաղափար չկա, յուրաքանչյուրն ունի իր հստակ դերը: Նրանց ՆԵՐՂԱՇՆԱԿՈՒԹՅԱՆ մեջ է կայանում մարդկային կյանքի երջանկության գաղտնիքը:

Կինն ունի իր տեսակային՝ ֆիզիոլոգիական եւ հոգեբանական առանձնահատկությունները ու, դրանով իսկ պայմանավորված, սոցիալական դերն ու առաքելությունը: Ո՞րն է կնոջ առանձնահատուկ կոչումը: Պատմական տեսանկյունից դա մայրությունն է, ինչպես որ տղամարդու համար՝ հայրությունը, որով էլ նրանք հատկապես արժեկրկում են: Մայրության կերպարը եւ առաքելությունը սոցիալական առումով ոչնչով հնարավոր չէ փոխարինել. սոցիալական որեւէ դիրք եւ որեւէ պաշտոն դրա տեղը չի կարող զբաղեցնել:

Մարդկային ընկերակցությունը կազմվում է ընտանիքով եւ, ընտանիքում մայրն իր կարետոր տեղն ու դերն ունի. դա երեխայի կրթությունն ու դաստիարակությունն է: Սա մանկավարժական եւ հոգեբանական ակնհայտ իրողություն է:

Ավանդաբար հայ ընտանիքը յուրահատուկ ինքնավարություն էր հայրիշխանության բոլոր օրենքներով, որտեղ հոր կամքը օրենք էր: Սակայն նույնիսկ այդ ընտանիքում գերիշխողը հոր պաշտամունքը չէր: Ընտանիքի հոր համար անգամ տիրապետողը մայրապաշտությունն էր: Տղամարդը ընտանիքի բարեկեցության ապահովողն էր եւ պաշտպանը, կինը՝ օջախի պահապանն ու երեխաների դաստիարակը:

Պատմությունը վկայում է, որ հայ կինը երբեք հեռու չի եղել քաղաքական կյանքից եւ վճռական պահերին միշտ էլ կարողացել է գորավիզ լինել իր հայրենիքին: Ու չնայած ներկայումս կին քաղաքական գործի առկայությունը ոչ ոքի չի զարմացնում, եւ նրա նկատմամբ պահանջները նույնչափ խիստ են, հայերս այս հարցին միշտ էլ վերապահումով ենք մոտենում: Ընդունենք սակայն, որ ինչպես տղամարդուն, այնպես էլ կնոջն այսօր վստահված են խիստ կարետոր խնդիրներ: Յուրաքանչյուր հայ կնոջ, առավել եւս մոր համար դժվար է այսքան մոտ լինել պատերազմին, հայտնվել սոցիալական բեռնացման դաշտում ու ստիպված ստանձնել բարդ խնդիրներ լուծելու պատասխանատվությունը: Բայց այդպես է: Այսօր կինը նույնքան քաղաքական գործիչ է, որքան եւ մայր, որը պետք է մեծացնի ու դաստիարակի վաղվա քաղաքացուն, վաղվա զինվորին: Հայաստանը ներկայումս սոցիալ-տնտեսական ծանր կացության մեջ է, կան նյութապես անապահով ընտանիքներ: Նրանց օգնելու, սատար կանգնելու համար որոշակի դեր են կատարում կանանց կազմակերպությունները:

Վերջին տարիներին հայ ընտանիքին վիճակված փորձություններն էլ ավելի են կարետորում կնոջ դերն առօրյա կյանքում՝ նրանից պահանջելով հոգեկան ու ֆիզիկական մեծ լարվածություն, ստիպելով մոբիլիզացնել բնության կողմից իրեն տրված ամբողջ ներուժը: Կինը պետք է իր մեջ լրացուցիչ ուժ գտնի ոչ միայն հոգեկան ապրումները հաղթահարելու, այլեւ ընտանիքում բարոյական մթնոլորտը պահպանելու, ամուսնուն թիկունք կանգնելու, գալիք օրերի հանդեպ հավատ ներշնչելու համար:

Կնոջ բնական, գենետիկական ֆունկցիան երեխաների ու ընտանեկան օջախի պաշտպանությունն է: Մայրությունը արվեստների արվեստն է: Մարդ դաստիարակելն անհամեմատ ավելի դժվար է, քան մասնագետ պատրաստելը: Տարիքի հետ մարդու հոգում իր մոր կերպարը, եթե հատկապես մանկությունը եղել է երջանիկ, ավելի ամբողջական է դառնում, իմաստավորվում: Ինչպես իր հոգվածներից մեկում պատկերավոր գրել

է արժանահիշատակ Գարեգին Ա կաթողիկոս Հովսեփյանը. «Ընտանիքը տաճար է, եւ նրա քահանան մայրն է»: Մեծ ճշմարտությունն է խորհուրդ կա այս տողերում:

* *

*

Հասարակության, ազգի, ցանկացած հանրային ներդաշնակության ապահովման հիմնական պայմաններից մեկը տղամարդկանց եւ կանանց միջեւ դերերի ճիշտ բաշխումն է:

Այդ դերերի սխալ բաշխման սոցիալ-հոգեբանական ծանր հետեանքների մասին է փորձագետ-հոգեբան ԿԱՐԻՆԵ ՆԱԼԶԱՋՅԱՆԻ կողմից առաջադրվող խնդիրը: Վերլուծելով ժամանակակից հայ դպրոցի բազմաթիվ եւ բազմաբնույթ պրոբլեմները, զեկուցողը հատկապես կանգ առավ այսօր մեր առջեւ ծառացած աներկբայելի եւ անառարկելի մի իրողության՝ Հայաստանի դպրոցում տղամարդ-ուսուցչի գրեթե իսպառ բացակայության վրա եւ շեշտեց այն անցանկալի հետեանքը, որ թողնում է այդ երեսույթը տղաների սոցիալականացման ընթացքում նրանց անձի ձեավորման շրջանում:

Աշակերտի համար գիտելիքների, գիտության եւ ընդհանրապես կրթվածության կրողը ուսուցիչն է: Այս տեսակետից ուսուցչի դերը խորհրդանշական է: Իսկ սեռական աճի ու զարգացման ընթացքում «ես»-ի ձեավորման գործում վճռական դեր ունի տղամարդ-խորհրդանշիչը:

Իսկ այսօր մեր երեխաների մտապատկերում այդ խորհրդանշիչ-ուսուցչի, գիտելիքների կրողի կերպարը միայն կինն է: Այս զուգորդման հետեանքով կրթությունն ու գիտելիքն արժեվորվում եւ ընկալվում են որպես կնոջը հատուկ եւ անհրաժեշտ գործոն: Այս դիրքորոշումն իր դրոշմն է թողնում տղայի հոգեկանի ձեավորման վրա: Մինչդեռ, դեռահասը թե՛ ներքուստ, եւ թե՛ արտաքուստ, ամենուրեք ձգտում է դրսևորել իր

առնականությունը՝ ինքնահաստատվել որպես տղամարդ: Բնականաբար, նշված պայմաններում գիտելիքներ ձեռք բերելը եւ կրթություն ստանալը դառնում է աղջիկների մենաշնորհը: Դժբախտաբար, այս դիրքորոշումը ներագրում է անձի ձեավորման վրա եւ անշրջելի փոփոխություններ առաջացնում: Ահա թե ինչու, հատկապես բարձր դասարաններում, տղաները ոչ միայն վատ են սովորում, այլեւ շատ հաճախ խուսափում են դասերից: Իրենց սոցիալական դերի կայացման համար դպրոցը չի ընկալվում որպես ցանկալի միջավայր:

Այսօր, հատկապես բարձր դասարաններում, դաս սովորելը, նույնիսկ կանոնավոր դպրոց հաճախելը տղաներն իրենց արժանապատվությունից ցածր են համարում: Ավելին, դեպի գիտելիքը բնական մղում ունեցող եւ օժտված պատանին շատ հաճախ գիտակցաբար, կանխամտածված լքողարկում է իր այդ ձգտումը, թաքցնում իմացածը՝ դասընկերների աչքում տղամարդու իր ինքնագնահատումը չնսեմացնելու համար: Ընդունակ եւ ջանասեր տղաները հաճախ հալածվում են, որակվում տարբեր պիտակներով, նույնիսկ արժանանում հասակակից տղաների բացահայտ ագրեսիվ վերաբերմունքին: Իսկ աղջիկները լավ սովորող տղաներին թերագնահատում են, նրանցում տեսնում անլիարժեքության գծեր:

Բարձր առաջադիմություն ունեցող, ուսուցչուհիների գովասանքին արժանացող տղան, որպես կանոն, իր հասակակիցների շրջանում սոցիալ-հոգեբանական տեսակետից մերժվածի կարգավիճակ ունի եւ ներհոգեկան բախումները խոր հետք են թողնում նրա անձի ձեավորման վրա:

Խնդիրը հասարակական հնչողություն է ստանում այն առումով, որ հայ տղամարդուն բնորոշ ինտելեկտուալ արժեքներն աղավաղվում են, եւ այս երեսույթը կարող է արմատավորվել ու զգալի վնաս հասցնել մեր հոգեւոր կյանքին, խաթարել գրքի, գիտելիքի, կրթության հանդեպ մեր ազգին ներհատուկ սերն ու ակնածանքը: Բնական է, որ մեր ընտանիքներում, եւ դպրոցում

երեխային հորդորում են, համոզում, բացատրում զիտելիքներ յուրացնելու եւ կրթություն ստանալու կարեւորությունը: Բայց տեսական ներգործությունների արդյունքը մեծ լինել չի կարող, քանի որ այսօր երեխայի սոցիալականացման ընթացքն ինքնին չի նպաստում դրան: Ներկայիս դպրոցը կարծես կանանց հաստատություն է դարձել: Հետեւաբար, կրթվածության եւ ամենականության գրեթե հակոտնյաներ դառնալու գլխավոր պատճառներից մեկը տղամարդ-ուսուցիչների բացակայությունը եւ եղածների ցածր սոցիալական կարգավիճակն է: Մինչդեռ, ոչ վաղ անցյալում ուսուցչությանը մեծ մասամբ տղամարդիկ են զբաղվել: Մեր շատ ու շատ վաստակաշատ ուսուցիչներ եղել են բազմակողմանիորեն զարգացած ու ստեղծագործող անձինք: Ալիշան, Աղայան, Պերպերյան, Խրիմյան Հայրիկ... Նրանց աշակերտելն իսկ պատվաբեր է համարվել: Այսօր ոչ մի դպրոցական, բացառությամբ մի քանի աղջիկների, ուսուցիչ դառնալու ցանկություն բացարձակապես չունի: Եվ տղայի իդեալական Ես-պատկերում ուսուցչի դերը մի տեսակ ամփոփվել է կնոջ կերպարում: Ելնելով վերը շարադրվածից, դժվար չէ պատկերացնել, թե որքան մեծ է հայ մարդու հավաքական ինքնությանը, ազգային բնավորության ձեւավորմանը հասցված այն հարվածը, որի պատճառը առաջին հայացքից, թերեւս, քիչ նկատելի եւ լուրջ ուշադրության չարժանացող մի իրողությունն է: Մինչդեռ այս իրողությունը սպառնում է առաջիկա տասնամյակներում օտարել հայ տղամարդուն մտավոր արժեքներ ստեղծողի (այդքան իրեն հատուկ) ասպարեզից:

Կարծում ենք, նկարագրված երեւոյթը պետք է դառնա պետական քաղաքականության խնդիրներից մեկը, որի լուծումը կապահովի օժտված տղամարդ-ուսուցչին դպրոցում պահելու սոցիալ-հոգեբանական, տնտեսական, բարոյական եւ իրավական պայմանները:

Փորձագետ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր
ԳԱՅԱՆԵ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆԻ զեկուցման թեման էր
«Ընտանիքի միաբանությունը՝ ազգային միաբանության
նախապայման»:

Պատմական տարբեր ժամանակաշրջաններում դեռեւս Մաշ-տոցը, Կոդբացին, Եղիշեն եւ շատ ու շատ մեծեր մատնանշում էին միաբանության բախտորոշ դերը մեր ժողովրդի պատմական ճակատագրի համար: Նրանք իրենց ժամանակակիցների ու հետագա սերունդների ուշադրությունը սեւեռել են ազգային միաբանության, փոխադարձ բարեկամության անհրաժեշտության վրա: Եվ պատահական չէ, որ հասարակության տարբեր խավերի, տարբեր տարիքային խմբերի ներկայացուցիչների կենսագործունեության դիտարկումները, զրույցներն ու հարցումները հանգեցրին այն եզրակացությանը, որ մեր ժողովրդի փրկության ու բարգավաճման գործում այսօր էլ մեծագույն դեր ունի միաբանությունը (համախմբվածությունը):

Այս հրատապ խնդիրը պետք է սերմանվի ընտանիքում դեռեւս մանուկ հասակից, քանի որ հենց ընտանիքում են ձեւավորվում ապագա քաղաքացու անհատականության հիմքերը եւ, ընտանիքը, որպես համախմբվածության օրինակ, մեծ ազդեցություն է թողնում նրա դաստիարակության գործընթացի վրա:

Հայ ընտանիքը բնութագրող առանձնահատկությունները որոշելու նպատակով անցկացվել են հետազոտություններ, որոնց ընթացքում բացահայտվել են «միաբանություն» կատեգորիայի տիպերը՝ հաշվի առնելով ընտանիքի առանձնահատկությունների հոգեբանական եւ մանկավարժական չափանիշները: Հետազոտության ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ընտանիքի անդամի այն հատկությունների բացահայտմանն ու ուսումնասիրմանը, որոնք ձեւավորված լինելով մանկության տարիներին, հետագայում դառնում են ընտանեկան գոյության պատճառ:

Հայ ընտանիքը ներկայումս ենթարկվում է բարդ կառուցվածքային փոփոխությունների: Դեպի գործարար հաղորդակցումը կատարվող արագընթաց անցման գործընթացները խթանում են բնակչության լայնագանգված շարժը: Ընտանիքի յուրաքանչյուր անդամ իր գործարար ակտիվության կենտրոնը տեղափոխել է ընտանեկան օջախից հեռու գտնվող քաղաքներ ու երկրներ, ինչը նպաստում է այլ ժողովուրդների մշակույթին հաղորդակցմանը, հանգեցնում է հոգետր հարստացմանը եւ մասնագիտական աճին: Բայց մյուս կողմից այդ նույն գործընթացները հանգեցնում են բազմապիսի երեւոյթների մեկնաբանման ու գնահատման հակասականության առաջացմանը, փոխըմբռնման խաթարմանը, բախումների ծագման ինչպես բուն անհատի կառուցվածքում, այնպես էլ նրա եւ հայրենիքում մնացած ընտանիքի մյուս անդամների միջեւ, ինչն էլ ի վերջո հանգեցնում է ընտանիքի անդամների գծումանն ու օտարմանը:

Եթե նախկինում հայ ընտանիքում գերակշռում էր դաստիարակության անառարկելիության տարրը՝ ավագների նկատմամբ բացահայտ հարգանքի դրսեւորում, կրտսերների հնազանդություն, ապա այժմ շատ հաճախ երեխաները չեն ենթարկվում ծնողների պահանջներին, չեն ընդունում նրանց կենսակերպը: Այս ամենը, ինչ խոսք, ազդում է ընտանիքի յուրաքանչյուր անդամի կարգավիճակի վրա, խորացնում «հայրերի ու որդիների» վաղեմի հիմնահարցը:

Եթե 60-70 տարեկանների խմբում գերակշռում է անտարբերությունը եւ ստեղծված կացության հանդեպ տրտում հնազանդությունը, ապա 50 տարեկաններն անթաքույց կարոտ են դրսեւորում ժողովրդի հանդեպ, բացահայտորեն մերժում են ընկերային-տնտեսական նոր հարաբերությունները: 40 տարեկանները փորձում են հարմարվել եւ ապրել ընկերային-տնտեսական նոր պայմաններում: 30 տարեկաններն ուշադիր ծանրութեթեւ են անում զարգացած երկրների փորձը եւ նպատակամետ գործողություններ են ծավալում: 20 տարեկաններին

չեն հուզում բարոյականության հարցերը: Գործը կազմակերպելիս եւ շրջապատի հետ փոխհարաբերություններում նրանք դրսեւորում են պատանեկան մեծամտություն եւ օգտապաշտություն: 10 տարեկանները սովորում են լինել քաղաքակիրթ «պրագմատիկներ»: Ուսումնասիրությունը միաժամանակ բացահայտեց ընտանիքի եւ ամբողջությամբ վերցրած՝ ազգի միասնությանն անհանգստացնող խորքային գործընթացները: Ընտանեկան դաստիարակության համակարգի հիմքում պետք է լինեն ընտանիքի անդամների միջեւ օտարման բացասական դաշտ ստեղծող՝ անձնավորության ծագումնաբանորեն պայմանավորված հատկությունների համահարթեցմանը նպատակաուղղված միջոցները: Մյուս կողմից այդ համակարգը պետք է կառուցվի ազգի այն ազգագրական առանձնահատկությունների հենքի վրա, որոնք օգնել են նրան պահպանվել եւ զարգանալ պատմական տարբեր դարաշրջանների ծայրահեղ իրավիճակներում:

Ազգային համաձայնության եւ բարօրության հնարավոր կլինի հասնել միայն այն դեպքում, եթե մեր հասարակության բոլոր անդամները գիտակցեն ու ընդունեն յուրաքանչյուր անհատի համար ընտանիք-ազգի միաբանության դերի գերակշռությունն ու օգտավետությունը:

ԳԵՐՂԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԿԻՆԸ

Քաղաքակրթության գոյատևման և զարգացման անհրաժեշտ նախապայմաններից են ազգերի ձեռավորումը, գոյատևումն ու զարգացումը: Հայ ազգի գոյապահպանման և զարգացման բնականոն աղբյուրներից ու պայմաններից է գերդաստանը, որպես արյունակցական-ազգակցական կապերի հիման վրա տոհմացեղային հարաբերությունների մեջ ձեռավորված և պետական կյանքի մեջ միավորված էթնոսոցիալական քիչ: Հայ ժողովուրդն իր ձեռքբերումների կողքին եղել է նաև հակազերդաստանային: Այդ պատճառով ժամանակակից պայմաններում հայ գերդաստանի, նրանում հայ կնոջ դերի իրական գնահատումը և հայոց պետականության կազմման կարևորագույն գոյամարտերից մեկը դարձնելը ազգային գաղափարախոսության և պետական քաղաքականության առաջնային խնդիրներից է:

Տարբեր ազգեր յուրովի են իրացրել սեփական նախանշանակությունն ու դերը քաղաքակրթության մեջ:

Հայ ազգի ձեռավորման ու զարգացման կարևորագույն հիմքերից մեկը դարձել է գերդաստանը: Այն ազգային-սոցիալական այնպիսի միավոր է, որն արյունակցական-ազգակցական կապերի հիման վրա ձեռավորվել է տոհմացեղային հարաբերությունների ժամանակներում և յուրովի ինտեգրվել պետական կյանքի մեջ: Գերդաստանը բաղկացած է եղել տասնյակ ընտանիքներից, երբեմն՝ հարյուրավոր անդամներով: Գերդաստանը եղել է հարաբերական ինքնուրույնություն ունեցող տնտեսաբարոյական միավոր, որն ունեցել է սեփական կառուցվածք, համատեղ կյանքի ֆունկցիաների հստակ բաշխում: Այն իր մեջ է կենտրոնացրել և խտացրել համամարդկային, կրոնական և ազգային բարոյականության արժեքները, դարձել դրանց հավաք ու որոշակի արտահայտությունը:

Հայ գերդաստանը վերջին երկու հազարամյակում զարգացել է քրիստոնեական բարոյականության արժեքների հիման վրա և դարձել վերջինիս յուրօրինակ դրսևորումներից մեկը: Հայ իրականության մեջ գերդաստանի դերն անհատի կյանքում այնքան մեծ է, որ մարդու անձնական որակներն առաջին հերթին գնահատվել ու գնահատվում են գերդաստանային պատկանելությամբ, ինչն այսօր էլ հայ մարդու ենթագիտակցության մեջ գրավում է առաջնակարգ տեղ:

Վերջին հազարամյակում հայության պետականագուրկ վիճակը, կրոնաէթնիկական նկարագրին, նույնիսկ ֆիզիկական գոյությանը սպառնացող անընդհատ վտանգը, հայ եկեղեցու կողքին գերդաստանը դարձել է այն եզակի միջոցներից մեկը, որն էապես նպաստել է, եթե ոչ փրկել, ազգը:

Գերդաստանն առանձնակի նշանակություն է ունեցել հայ կնոջ կյանքում: Մեր պատմության և ազգային-քրիստոնեական սեռական բարոյականության բովանդակությունը գերդաստանային միջավայրը դարձրել է մի յուրօրինակ դպրոց, ուր կինը հաղորդակից է դառնում ոչ միայն կենցաղային գիտելիքներին, այլև հասու է դառնում կնոջ սոցիալական դերին՝ տանտիրուհու, կնոջ, մոր, քրոջ, օջախի պահապանի, ազգանվեր սերնդի դաստիարակողի:

Մեր կարծիքով, հենց գերդաստանն է եղել այն հիմնական «բնակատեղին», ուր ձեռավորվել է աշխարհի ամենատարբեր ազգությունների ու քաղաքակրթությունների մոտ անբռնազրոս, մեծագույն հարգանք վայելող, չափազանց համեստ, առաքինի, նվիրված, անշահախնդիր, անձնագոհ ու անվախ հայ կնոջ կերպարը: Այս մասին անթիվ տեղեկություններ են հայտնում հատկապես Մեծ Եղեռնից մազապուրծ, ողջ աշխարհով սփռված, և աշխարհում իրենց ինքնահաստատած հայ արվեստագետները, տարբեր բնագավառների գործիչները: Շատերի խոստովանությամբ, իրենք ազգային դիմագիծը չեն կորցրել ու հավատարիմ են մնացել հայկական արմատներին հիմնականում

մայրերի ու տատիկների երբեմն առասպելական ջանքերի շնորհիվ: Վերջիններս են, որ օտար մշակույթի մեջ ձեռավորվող հայ մանուկի հոգում բորբոքել են սերն ու հպարտությունը իրենց գերդաստանի, ազգային արժեքների հանդեպ:

Ապացույցները բազմաթիվ են, սակայն որպեսզի տվյալ իրողությունն ընդունվի որպես գիտական փաստ, այն պետք է հիմնավորվի համահայկական համալիր ուսումնասիրությունով:

Խնդիրն առանձնակի է կարեւորվում մեր ժամանակներում, քանի որ հատկապես վերջին հարյուրամյակի հայակոտոր քաղաքականությունը, Մեծ ու Փոքր Եղեռնը եւ կոմունիստական բարոյականությունը մեծապես ցնցել են հայ գերդաստանի հիմքերը: Այն կորցրել է բազմաթիվ որակներ, որոնք բացասաբար են անդրադարձել մեր ազգային նկարագրի վրա: Մասնավորապես կորսված հարգանքը մեծերի, կանանց նկատմամբ, գերդաստանային նկարագրին անհարիր փոխադարձ անտարբերությունը, եսամոլությունը եւ այլն: Ավելին, մեր համոզմամբ, հայ ազգի չարակամները թերեւս գիտակցաբար շատ դեպքերում թունավոր նեւն ուղղել են հենց հայ գերդաստանի արժեքների դեմ, գիտակցելով, որ դա հայերի միասնականությունը պաշակտելու ամենակարճ ուղիներն են:

Մյուս կողմից, քաղաքակրթության մեջ ներկայումս առկա են իրողություններ, որոնք երրորդ հազարամյակի շեմին առարկայորեն փոխում են մեր ըմբռնումներն ու վերաբերմունքը բարոյականության, ընտանիքի, կնոջ դերի մասին: Նորովի են ընկալվում ամուսնական փոխադարձ պարտավորությունները, սոցիալ-տնտեսական հավասարությունը, կնոջ եւ տղամարդու փոխադարձ հավատարմությունը, արյունակցական կապերի նշանակությունը եւ այլն: Այս ամենի ճիշտ վերլուծությունն ու համադրումը ազգային շահերի հետ այսօրվա հրամայականն է:

Հիմնահարցի ճշգրտման նպատակով անցկացվել է փորձագիտական հարցում երկու խումբ երիտասարդ կանանց հետ (յուրաքանչյուրը 30 հոգի): Առաջին խումբը ապրում է Ինտենսիվ

գերդաստանային կապերով, մյուսը՝ ավելի թույլ, մեծ մասամբ մեկուսի ընտանեկան միջավայրում:

Հարցազրույցի ընթացքում մեզ հետաքրքրել է կանանց ինքնազգացողությունը՝ կապված ազգակցական հարաբերությունների հետ, համատեղ կյանքի ազդեցությունը սեռական գիտելիքների ու վարքի վրա, ինքնաբավարարվածությունը, ինքնահաստատման հնարավորությունները:

Մեկուսի ընտանեկան միջավայրում ապրողների մոտ 70 տոկոսը կնոջ դերի, առաքելության, սեռական կյանքի վերաբերյալ իրենց գիտելիքները բավարար չեն համարում եւ դժգոհում են վատ ինքնազգացողությունից: 80 տոկոսի ինֆորմացիայի միակ աղբյուրը մայրն է, երբեմն՝ ընկերուհիները: Եվ եթե ավանդական ամոթխածությունը կամ կեղծ բարեպաշտությունը թույլ չեն տալիս կնոջ համար կենսական կարեւորություն ունեցող երեւոյթների մասին տեղեկանալ, բացը լրացնում է «փողոցը», ինչը բացասաբար է անդրադառնում ազգային բարոյականության վրա:

Երկրորդ խմբի կանանց 80 տոկոսը հիմնականում գոհ է իր վիճակից: Ինտենսիվ բարեկամական շփումները, գերդաստանային ավանդույթների պահպանումը, արժեքների ընդհանրություններն այս կանանց մոտ ձեռավորել են սոցիալական պաշտպանվածություն, ամուր կապվածություն հայրենի հողին եւ ազգային արժեքներին: Նրանց մոտ ինքնըստիներյան ընդունելի եւ անվիճարկելի արժեք է կանացի վեհության՝ պատվի պահպանումը (գերդաստանի պատիվն է):

Առաջին խմբի կանանց 60 տոկոսը նշեց, որ վերջին տարիների տնտեսական դժվարություններն ընտանիքը շատ ծանր է տանում (օգնող չունեն, շատացել են վեճերն ու բախումները) եւ «աչքի առջեւ» քայքայվում է: Մինչդեռ երկրորդ խմբում հիմնական չորսը նշեց, որ նյութական վիճակը տանելի է, բարեկամների միջեւ առկա է արդյունավետ փոխօգնությունը, իսկ ընտանեկան կյանքն անհամեմատ խաղաղ է, ամուսնական

հարաբերությունները՝ կայուն:

Այսպիսով, կարելի է անդել, որ՝
ա) Գերդաստանը եղել է հայապահպանության եւ ազգային կյանքի բնական արդյունքն ու եական գործոններից մեկը:

բ) Այդ պատճառով հաշվի առնելով առկա աշխարհաքաղաքական եւ համահայկական իրողությունները, հայ գերդաստանի վերածնունդն ու հետագա զարգացումը պետք է դառնա հայության ու Հայաստանի ազգային-պետական քաղաքականության գերապատվելի ուղղություններից մեկը:

Բնական է, որ ասվածը չպետք է ընկալվի որպես անցյալի, իր դարն ապրած եւ ժամանակակից սոցիալ-քաղաքական կյանքի հետ սկզբունքորեն անհամատեղելի որակների մեխանիկական վերարտադրություն: Խոսքը գերդաստանին բնորոշ եւ նրա գործառնական ազդեցության տակ հայ անհատին ձեռավորող այն հատկանիշների խթանման մասին է (անառարկելի հարգանք մեծի, կնոջ հանդեպ, հանուն գերդաստանի եւ ազգի պատվի զոհողության պատրաստակամություն, ազգային եւ սեռական արժեքների ժառանգելիություն, նյութա-քաղաքական փոխաջակցության մշտական պատրաստակամություն եւ այլն), որոնք «ինվարիանտ» են ազգապահպանության հարցի հանդեպ: Այստեղ էականը գերդաստանային կյանքի բովանդակությունն ու նրա արժեքները ներկա եւ ապագա հայ ընտանիքների մեջ ներարկելն է: Սա է, որ հիմնավորապես չպետք է անտեսվի ինչպես ողջ հայության կողմից, այնպես էլ Հայաստանի պետական-ազգային քաղաքականության մեջ:

գ) Նման քաղաքականությունը ներառում է հայ ընտանիքի եւ կնոջ տոհմիկ կերպարի պատմական դերի ուսումնասիրում: Այդպիսի հետազոտության արդյունքները պետք է թույլ տան բնորոշել հայ կնոջ ժամանակակից կոչումը ազգի կենսունակության պահպանման եւ զարգացման խնդրում:

դ) Ազգային գաղափարախոսության պահանջների շրջանակներում առաջիկայում իրացվելիք նման ուսումնասիրությունը

պետք է ընդգրկի հարցերի հետեւյալ խումբը (թերեւս ավելորդ չէ նշել, որ նկատի ունենալով խնդրի ինքնատիպությունը, շոշափվող հարցերի մտերմիկ-քաղաքական ընդգծվածությունը, մեր կարծիքով այն պետք է անցկացվի որպես խորը, չստանդարտացված հարցազրույց՝ ստորեւ բերված հարցերի շրջանակներում):

1. ԸՆՏԱՆԻՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- ընտանիքի կազմը (համատեղ ապրողների ազգակցական արյունակցական հարաբերությունները),
 - ընտանիքի անդամների սոցիալական կարգավիճակը (պատճ, զբաղմունք, իդեալ),
 - ժառանգականությունը ընտանեկան կյանքում,
 - գերդաստանային սրբությունները, ծագումը, իրազեկությունը այդ մասին,
 - գերդաստանային արժեքների փոխանցման մեխանիզմները,
 - բարեկամական կապերի ինտենսիվությունը,
 - համատեղ կյանքը.
- նյութական համատեղ կյանք, քաղաքական արժեքների ընդհանրություն, բախումները, դրանց տեսակները, բնույթը, փոխօգնությունը, փոխազդեցությունը, վերաբերմունքը ընտանիքին, գերդաստանին, պետությանը, ազգին:

2. ՀԱՅ ԿՆՈՋ ԿԵՐՊԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- կնոջ, տղամարդու, ընտանիքի անձնական իդեալները. ձեռավորման աղբյուրները,
- հայ կնոջ պատմական դերի իմացությունը, գնահատումը,
- կնոջ դերի զգացողությունը. երեխայի անձի ձեռավորման,

ընտանիքի պահպանման, ազգի կենսունակության ապահովման մեջ,

ա) սեռական հասունացումը, հնարավոր բարդությունները,

բ) սեռական ճաշակը, արժեքները, վերաբերմունքը,

գ) սեռական կյանքի լիարժեքությունը եւ վերաբերմունքը սոցիալական միջավայրին:

3. ՀՆԱՐԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

Ընկերաբանական ուսումնասիրություններից բացի նախատեսվում է անցկացնել նաեւ լրացուցիչ հարցումներ, որոնք հնարավորություն կտան ստանալ ստորեւ բերված հարցերի համակարգված պատասխանները:

ԼՐԱՅՈՒՅԻՉ ՀԱՐՅԵՐ

(ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)

ԸՆՏԱՆԻՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ընտանիքների տեսակները Հայաստանում.

ա) միջուկային

բ) ընդլայնված

գ) նահապետական ընտանիք

դ) ոչ լոիվ ընտանիքներ

2. Երեխաների դաստիարակության եւ ընտանիքի կառավարման ոճերը եւ դրանց հետեւանքները երեխաների անձի ձեւավորման գործում:

Ո՞րն է եղել հայ ավանդական ընտանիքի կառավարման ոճը

եւ ինչպես է այն ազդել մեր ազգի հոգեկան կերտվածքի վրա:

3. Ընտանեկան բախումների տեսակները եւ պատճառները:

Հայաստանում ընտանեկան կոնֆլիկտների լուծման եղանակները:

Ներընտանեկան ազապատգիայի ստրատեգիաները:

ԿՆՈՋ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Կնոջ դիրքն ու սոցիալական դերերը ընտանիքում:

ա) ամուսնական դեր, բ) մոր դեր, գ) հարսի դեր

2. Ինչպես են փոխվել հայ կնոջ դիրքն ու դերերը՝ համեմատած նահապետական ընտանիքում ունեցած դերերի հետ:

3. Ամուսինների հոգեբանական, ֆիզիոլոգիական եւ սոցիալական համատեղելիության խնդիրները.

ա) ֆիզիկական զրավության դերը,

բ) սոցիալական դիրքորոշումներն ու հայացքները,

գ) արժեքների համակարգը,

դ) կրթական մակարդակների տարբերությունը,

ե) սեռական կյանքը եւ ֆիզիոլոգիական ու հոգեսեռական համատեղելիության հարցը,

զ) կնոջ ներընտանեկան եւ պրոֆեսիոնալ դերերի համատեղման հարցը:

Կինը՝ կարիերիստ: Կինը՝ կառավարման համակարգում:

4. Հայ կնոջ իդեալական կերպարի ստեղծման անհրաժեշտությունը՝ կանանց նոր սերնդի դաստիարակության համար:

Հոգեբանական նույնացման (իդենտիֆիկացման) օբյեկտների անհրաժեշտությունը:

5. Հայ կինը եւ ծուլման (ասիմիլյացիայի եւ ուծացման) գործընթացները Հայաստանում եւ Սփյուռքում:

**Մեմինարում եզրափակիչ խոսքով հանդես եկավ
ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ, որը մասնավորապես նշեց.**

Ծրագրի նպատակի պարզաբանումը, ըմբռնումը անշուշտ շատ կարեւոր են: Սակայն սա հարցի միայն մի մասն է: Պետք է գտնել դրա գործադրման լավագույն միջոցները: Խնդիրը նրանում է, որ մենք կարողանանք որոշակի ժամանակահատվածում գտնել պատասխանները այն հարցերի, որոնք համարում ենք կենսական: Կան ընդհանուր երեւոյթներ, կան պատմականորեն առաջացած դժվարություններ, կան խնդիրներ, որոնք առաջանում են այս վերջին տարիներին:

Այսօր հույժ կարեւոր է տեսնել, թե ինչ միջոցներով կարող ենք ի հայտ բերել եւ մատուցել մեր հասարակության տարբեր խավերին ազգի հոգեբարոյական կորուլի բարձրացման հնարավորությունները: Սա անհրաժեշտ է՝ դժվարությունները արագ, արժանավայել, քիչ կորուստներով հաղթահարելու համար: Հույժ կարեւոր է բացահայտել, թե արդյոք ունենք այնքան վարակամերժ հատկություն, որ դիմակայենք «սպիղներին»: Խնդիր դարձնենք այդ վարակամերժ հատկությունների զարգացումը (սա կա թ.1 ծրագրում): Այսօր հայության կեսից ավելին կանայք են, որոնք ունեն բնական առանձնահատկություններ, ունեն ընկերային ուրույն դեր: Սա անշուշտ պետական խնդիր է անկախ Հայաստանի համար, այսինքն ազգային պետության համար: Առաջիկա 20-30 տարիների ընթացքում հայ կանայք, որոնք այսօր կազմում են բնակչության 50-60%-ը, դաստիարակելու են ազգի 100%-ին: Ինչպիսի՞ն է լինելու ազգը 20-30 տարի հետո. կենսունակ, թե ոչ, պատրաստ իր արժանավայել տեղը

գրավելու ազգերի ընտանիքում, կախված է այսօրվա այս 50-60%-ից: Այս ձեռով է ՀԱՅԶ հաստատությունը առաջարկում նայել խնդրին: Դա չի նշանակում, որ այլ խնդիրներ չկան, բայց այս տարվա ընթացքում փորձենք այս հիմնական պատասխանները գտնել եւ մեր պարտքը կատարել մեր ժողովրդի ու նաեւ մարդկության հանդեպ: Թող ուրիշները եւս օգտվեն այն տեխնոլոգիաներից, որոնք հայ ժողովուրդը կմշակի այս նեղ վիճակից համեմատաբար անկորուստ դուրս գալու համար: Պետական, ազգային, մարդկային խնդիր է՝ ավելի կազմակերպված, ավելի մոբիլիզացված, ավելի նպատակաուղղված փորձել արագ դուրս գալ այս վիճակից: Մեր ժողովուրդը բազմիցս տեսել է այս ամենը, բայց ավագի վրա այբուբեն է սովորեցրել: Եթե հայ ժողովուրդը կարողանա արժանավայել դուրս գալ այս ճգնաժամից, սա համամարդկային երեւոյթ կլինի: Հավատանք, որ մենք դեռ չենք սպառել մեր հնարավորությունները, մեծ ներուժ ունենք այս հարցում: Կամք, մասնագիտական բարեխղճություն, կազմակերպվածություն, ծրագրավորում, սրանք են այն անհրաժեշտ տարրերը, որ մենք ունենք, եւ, այս ամենը գորահավաքի ենթարկելով, կատարենք այս աշխատանքը:

* *

ՀԱՅԶ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳԻՐ ԹԻՎ 10

ՀԱՅ ԿՆՈՋ ՏՈՀՄԻԿ ԿԵՐՊԱՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ԿՈՉՈՒՄՆ ՈՒ ԴԵՐԸ

Հայք հաստատության թիվ 10 ծրագրի կատարման նպատակն է.

1. Բացահայտել հայ կնոջ տոհմիկ կերպարը եւ բնորոշել նրա ներկա վիճակը, ձգտումները, դրանց բնույթը եւ ուղղությունը:

2. Բնորոշել հայ կնոջ կոչումը եւ նրա ընտանեկան, ընկերային, ազգային եւ մարդկային դերը, որ կարող է կատարել իր, իր ընտանիքի եւ իր ազգի կենսունակության բարձրացման եւ հայության ու Հայաստանի գոյապահպանման ու զարգացման համար:

Տասներորդ ծրագրով Հայք հաստատության գիտահետազոտական աշխատանքները բաղկացած են հետեւյալ մասերից.

Առաջին

Պատմագրական եւ ընկերաբանական ուսումնասիրություններ.

- Բացահայտելու եւ պարզաբանելու համար հայ կնոջ տոհմիկ կերպարը (հայ մարդու կերպարի ընդմիջից) եւ ժամանակի ընթացքում այդ կերպարի փոխակերպումները տարբեր տիրապետությունների եւ միջավայրերի քաղաքական, գաղափարական, կրթական, մշակութային, ընկերային եւ տնտեսական ազդեցությունների հետեւանքով:

- Գնահատելու այդ փոխակերպումների ազդեցության հետեւանքները ամբողջ հայության եւ հատկապես հայ կնոջ հոգեբանության, աշխարհայացքի, մտածելակերպի եւ վարմունքի վրա:

Երկրորդ

Ընկերաբանական եւ հոգեբանական ուսումնասիրություններ.

- Բնորոշելու համար հայ կնոջ ներկայիս վիճակը՝ իր ընկալմամբ, հայ տղամարդու ընկալմամբ եւ գիտական գնահատմամբ, Հայաստանում եւ Սփյուռքում:

- Պարզաբանելու համար հայ կնոջ հոգեւոր կոչումը եւ ուրվագծելու նրա ընտանեկան, ընկերային, ազգային եւ մարդկային դերը, որ պետք է կատարի իր, իր ընտանիքի եւ Ազգի կենսունակության բարձրացման եւ հայության ու Հայաստանի գոյատեւման եւ զարգացման համար՝ Հայ Ազգային Գաղափարախոսության էության եւ նպատակի հիման վրա: (Հայք հաստատության թիվ 1 ծրագիր):

В феврале 1996г. в Ереване состоялся научный семинар, организованный институтом АЙК. На семинаре обсуждались цель и задачи программы N10, посвященной задачам выявления места и роли современной армянской женщины в проблеме выживания и развития нации.

Программой предусмотрено изучение исторической роли и места женщины и выявление ее традиционного образа.

Со вступительным словом на семинаре выступил президент института АЙК Бабкен Вартамян, который подробно разъяснил цель разработки указанной программы и возможные пути ее реализации.

В заключительном выступлении Б. Вартамян предложил вниманию участников семинара развернутую программу, которая приводится в данном вестнике в качестве приложения.

ЭДУАРД ДАНИЕЛЯН. Армянская женщина - хранительница нации и очага

На протяжении всей истории армянского народа женщина олицетворяла собой нравственность, доброту и стойкость. В национальных легендах и преданиях армянская женщина была воплощением материнства, любви, света и красоты, а в историю она вошла как символ патриотизма, самоотверженности и героизма. На ее добродетелях держалась армянская семья. Милосердная по природе, она была беспощадна к врагам.

Армянская апостольская церковь освятила образ матери - хранительницы семейного очага.

Благодаря нестигаемой воле армянской женщины семья стала жизнеутверждающим символом нашего народа как на родине, так и в спурке.

ЖАСМЕН АГАСЯН. Образ женщины в армянской литературе

В статье воспроизводится образ армянской женщины, олицетворяющей собой принципы высокой нравственности. Автор отмечает, что, невзирая на свойственную художественному жанру идеализацию, собирательные образы литературных героинь имели свои исторические прообразы. Трудно переоценить воспитательную роль этих произведений в формировании личности сегодняшней женщины.

* *

*

Образу армянской женщины - участницы национально-освободительного движения, посвящены доклады ЦОГИК ПОГОСЯН И РОЗЫ ПАШИНЯН.

В первой работе освещена роль армянской женщины в общественно-политической жизни Армении конца XIX - начала XX века.

Приводятся имена героических участниц национально-освободительного движения, которые бок о бок со своими отцами, мужьями, сыновьями и братьями воевали за свободу и независимость своей родины.

Во второй работе приводятся документальные сведения о героических подвигах сегодняшних женщин, увековечивших свои имена в национально-освободительном движении Арцаха.

Авторы выражают надежду, что беспримерному подвигу этих женщин будет посвящен капитальный труд.

* *

*

Следующая группа докладов представляла результаты исследований экспертов-психологов и касалась проблем, характерных для РА.

В работе ВАЗГЕНА ПОГОСЯНА "Женщина и общество" отмечается, что женщины всегда были активными участниками судьбоносных событий. Приводятся данные о том, что и сегодня женщины активно участвуют в политической жизни общества. Традиционно в армянской семье культ матери был доминирующим. В той тяжелой социально-экономической и психологической обстановке, в которой оказался наш народ, роль женщины-матери становится еще более значимой в плане сохранения благоприятного морального климата в семье и внушения уверенности в неотвратимости наступления лучших дней.

В докладе КАРИНЕ НАЛЧАДЖЯН обсуждаются те нежелательные последствия социально-психологического характера, которые связаны с резким сокращением мужчин-педагогов в армянской школе. Учитель является для ребенка символом знания и образованности. И поскольку сегодняшняя школа скорее напоминает женский пансион, указанный символ для ребенка ассоциируется с образом женщины. Для юноши, обделенного вниманием мужчины-педагога, образованность и глубокие знания не являются составляющими идеала мужественности. Он подчас отвергает их.

Эти явления очень вредны для развития нации, поскольку чреваты уходом мужчин из сферы создания интеллектуальных ценностей.

Эксперт - доктор педагогики ГАЯНЕ МУСАЕЛЯН считает, что основу сплоченности нации составляет сплоченность семьи. На конкретных примерах показаны факторы, способствующие и мешающие сплочению семьи, происходящие в ней структурные изменения.

Изучение семьи позволит лучше понять некоторые социально-психологические причины эмиграции.

ЭДИК КЮРЕГЯН. Род и армянская женщина

Формирование, существование и развитие наций - необходимые предпосылки существования и развития цивилизации. Одним из естественных источников и условий существования и развития армянской нации является род как этносоциальная ячейка, сформировавшаяся в результате родоплеменных отношений и ставшая частью общества. Сравниваются результаты социологического опроса, проведенного с двумя группами молодых женщин, из которых одна группа живет в семье, сохранившей достаточно тесные родовые связи, другая - в "усеченных" семьях.

Для более глубокого изучения вопроса предусматривается проведение развернутого социолого-психологического обследования.

В статье приводится примерный круг вопросов для предстоящего опроса:

Project 10 of the "HAYK" Institute aims at identification of the contemporary role of the Armenian woman in maintaining Armenian national identity and promoting the society's progress. The seminar held by the "HAYK Institute" in February 1996 (Yerevan) discussed research outcomes revealing the Armenian woman's basic traits and historical role, providing useful insights into realizing project goals.

Introducing the seminar, Babken Vartanyan stated the correlations between Projects 1 and 10 and made practical suggestions. The seminar adopted a research agenda.

EDUARD DANIELYAN. The Armenian Woman as Safeguard of the Nation and the Family Altar.

Throughout Armenian history the Armenian woman has been the symbol of our nation's moral values and national security. In our national pantheon of gods she symbolizes motherhood, love, light and beauty, her historical image is expressed in patriotism, sacrifice, heroism. Conjugal faithfulness and family commitment have been largely due to her virtues. Although she is compassionate and kind, she could be a horror to the enemy.

The Armenian Apostolic Church has sanctified the motherly image of the Armenian woman and due to the strong will of the Armenian woman the Armenian family has become symbol of our national identity both in Armenia and the Diaspora.

ZHASHMEN AGHASSYAN. The Armenian Woman in Literature.

Armenian literature provides important insights of the Armenian woman, her characteristic features. Both pre-Christian and Christian period literature depict the Armenian woman as embodiment of high moral values. More importantly, literature characters usually have their historical

prototypes, which facilitates the securing of those high moral values in today's society.

Two presentations addressed the role of the Armenian woman in national-liberation movement. **TSOGHIK POGHOSSYAN** spoke about the role of the Armenian woman in Armenian social and political life at the end of the 19th and beginning of the 20th century. **ROSA PASHINYAN** presented the heroic deeds of our contemporaries. The national-liberation movement of Artsakh can boast immortal heroines, as well as heroes.

The next group of presentations discussed the results of psychology and pedagogy experts' systematized research. Their aim was to identify the parameters which can enable the woman, while maintaining her national integrity and remaining faithful to her historical mission, to use her full mental potential to the good of the newly-independent Armenia and contribute to its future prosperity. Psychology expert **V. POGHOSSYAN**'s presentation, entitled: "The Woman and the Society", was devoted to this problem.

The right social role distribution between men and women is a major factor to society's and nation's harmony. Psychology expert **KARINEH NALCHAJYAN**'s report concerned itself with the dire consequences that can ensue from the wrong role distribution.

Pedagogy expert **GAYANEH MOOSSAYELYAN** views family unity to be integral to the nation's unity.

EDIK KYOOREGHYAN. The Clan and the Armenian Woman. The survival and progress of civilization is paramount to

formation and progress of nations. The source of Armenian vitality and progress is the clan, an ethnosociological cell within tribal-racial relationships, based on blood-related ties and functioning within a state. Though history evidences the presence of anticlanical traits, the Armenian clan, predominantly owing its existence to the woman, is the primary determinator of Armenian statehood and its role should be enhanced in Armenian ideology and policy making.

Բովանդակություն

Մուտքի խոսք.....	4
Էդուարդ Դանիելյան. Հայ կինը՝ օջախի պահապան.....	9
Ժամսեն Աղասյան. Հայ կնոջ տոհմիկ կերպարը գրականության մեջ.....	13
Հայ կինը ազգային-ազատագրական պայքարում.....	19
Խմբագրական	21
Էդիկ Կյուրեղյան. Գերդաստանը եւ հայ կինը.....	30
Փակման խոսք.....	38
Հավելված «Թիվ 10 ծրագիր».....	40
Համառոտագրություններ.....	42